

Գուրգեն Վ. Վարդանյան  
*պատմ. գիտ. թեկնածու*

## ԳՊՐՈՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1918-1925թթ. իրավիճակի համեմատական վերլուծություն

Հայաստանի առաջին Հանրապետության գոյության երկու և կես տարիների ընթացքում զգալի աշխատանք կատարվեց ազգային-կրթական համակարգի ստեղծման ուղղությամբ, որը ժառանգելով 19-րդ դարում որակապես նոր մակարդակ ձեռք բերած հայ դպրոցի լավագույն ավանդույթները, դրանք համապատասխանեցնելու էր նոր՝ պետական իրողություններին:

1918թ. օգոստոսի 1-ին իր աշխատանքները սկսած Հայաստանի խորհրդում կրթության բնագավառում օրենսդրական ակտեր մշակելու նպատակով այլ հանձնաժողովների թվում ստեղծվեց դպրոցական հանձնաժողով, որի նախագահը դարձավ հնուտ մանկավարժ, Ռուսաստանի Պետական դոմայի նախկին պատգամավոր, ՀՅԴ անդամ Սիրական Տիգրանյանը<sup>1</sup>:

1918թ. սեպտեմբերից Հայաստանի Հանրապետությունում կրթության բնագավառում սկիզբ առան ժողովրդավարական բարեփոխումները: Հիմք դրվեց դպրոցների կառավարման պետական-հասարակական սկզբունքին, որի շնորհիվ հանրապետության տարածքում գործող նախկին պետական, եկեղեցական-ժխական և այլ տիպի դպրոցները ազատ գործելու հնարավորություն ստացան<sup>2</sup>: Չնայած տնտեսական ծանր կացությանը, ՀՀ կառավարությունը Հանրային կրթության նախարարության միջոցով ֆինանսական և նյութական միջոցներ էր հատկացնում դպրոցներին:

1918/1919 ուստարում Հայաստանի Հանրապետությունում գործում էին 133 տարրական դպրոց՝ 11.136 աշակերտով, 313 ուսուցչով, 10 միջնակարգ դպրոց՝ 3137 աշակերտով, 177 ուսուցչով<sup>3</sup>: Այս տվյալները ցույց են տալիս, որ թեև նախկին դպրոցական ցանցը կրճատվել էր, սակայն հաշվի առնելով այն մղձավանջային իրավիճակը, որում գտնվում էր երկիրը, կատարվել էր հսկայական աշխատանք՝ եղած դպրոցները պահպանելու համար:

1919 թ. օգոստոսի 10-ին ՀՀ Հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնում նշանակվեց Նիկոլ Աղբալյանը: Հայ մտավորականությունը հավանություն տվեց այս որոշմանը և ջերմորեն ընդունեց բազմաժանուր մանկավարժին ու գիտնականին, որը արգասաբեր գործունեություն ծավալեց կրթական գործի հե-

1 ՀԱԱ, ֆ.198, ց. 1, գ. 15, թ. 16:

2 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 4:

3 Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 336, թ. 33-37:

տագա կազմակերպման համար: Դպրոցների բացման գործում հատկապես մեծ էր հայ մանկավարժության նշանավոր դեմքերից մեկի՝ Գուրգեն Էդիլյանի ավանդը:

1919թ. վերջին - 1920թ. գարնանը Հայաստանի Հանրապետության խորհրդարանը և նախարարների խորհուրդը ընդունեցին մի քանի կարևոր օրենսդրական ակտեր ու որոշումներ. պետական լեզու ճանաչվեց հայերենը, եկեղեցական-ծրխական դպրոցները պետականացվեցին և դրվեցին ինքնավարությունների իրավասության ներքո: Կրթությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում աշխարհիկ էր ու մատչելի բոլոր խավերի համար:

Արդեն 1920թ. աշնանը երկրում գործում էր դպրոցական կայուն համակարգ, որը շարունակական զարգացում էր ապրում: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1919/20 ուստարում հանրապետության գավառներում տարրական դպրոցական ցանցը հետևյալ պատկերն էր ներկայացնում՝ 456 դպրոց, 40188 աշակերտով, 1047 ուսուցչով: Ջգալի աշխատանք էր կատարվել միջնակարգ դպրոցների բացման ուղղությամբ: 1919/20 ուստարում գործում էր 20 միջնակարգ դպրոց՝ 5063 աշակերտով, 286 ուսուցչով: Միջնակարգ էին դարձել Պուշկինյան, Նոր Բայազետի, Աշտարակի բարձր տարրական դպրոցներն ու Ալեքսանդրապոլի Ս. Փրկչի եկեղեցական-ծխական դպրոցը: Նոր էին բացվել Երևանի ուսուցչական սեմինարիայի խառը պրոգիմնագիան, Վաղարշապատի, Գարաբիլիսայի և Իջևանի գիմնագիաները<sup>4</sup>:

Պետությունը լուրջ ուշադրություն էր դարձնում դպրոցների հայացման խընդրին: 1920/1921 ուսումնական տարում պետք է ավարտվեր տարրական դպրոցների ազգայնացումը, վերացվելու էին նախկին ռուսական և հայկական ծխական ու թեմական դպրոցների միջև եղած տարբերությունները: Ազգային կրթական համակարգի ստեղծման ճանապարհին հատկապես մեծ նշանակություն ունեին հայերենը որպես պետական լեզու ճանաչելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները: 1919թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունում է հիրավի պատմական նշանակություն ունեցող որոշում՝ «Օրենք պետական լեզվի մասին»<sup>5</sup>: Սրանով իրականացավ հայ ժողովրդի երազանքներից մեկը. հայերենը պաշտոնապես ճանաչվեց որպես պետական լեզու: Որոշման ընդունման մեջ մեծ դեր խաղաց կառավարող կուսակցությունը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որը հետևողականորեն իրականացնում էր դպրոցների հայացման քաղաքականություն: Ազգային դպրոցի ստեղծման աշխատանքներին մասնակցում էին հայ առաջատար գիտնական-մանկավարժները՝ Ն. Աղբալյանը, Գ. Էդիլյանը, Սիր. Տիգրանյանը, Տ. Ռաշմաճյանը և ուրիշներ, որոնք քաջատեղյակ էին նաև եվրոպական երկրների կրթական համակարգերին:

Հանրապետության բուհական համակարգի առաջնեկի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրումը, մանկավարժական տարբեր դասընթացների կազմակերպումը պայմաններ էին ստեղծել նաև դպրոցները մանկավարժական որակյալ կադրերով համալրելու համար:

Հայ դպրոցը Հայաստանի անկախ հանրապետության առջև կանգնած ազգային-պետական խնդիրներին համապատասխանեցնելու ուղղությամբ 1918-1920թթ. իրականացված աշխատանքները՝ ընդունված որոշումները, մշակված ծրագրերը և այլն, ամենևին էլ չէին համապատասխանում 1920թ. վերջերին Հայաստանում խաղաղ կերպով, իսկ 1921թ. գարնանը գեներլ ուժով իշխանության եկած հայ բոլշևիկների ծրագրերին: Հայաստանի խորհրդայնացումից հետո կոմկուսը մի շարք միջոցառումներ իրականացրեց ազգային-կրթական համակարգը

4 ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 237, ք. 35, 156:

5 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 83:

արձատարապես վերանայելու և նոր՝ խորհրդահայ դպրոց ստեղծելու նպատակով: Չունենալով կրթական համակարգի կազմակերպման ու հետագա զարգացման ինքնուրույն ծրագիր, հայ բոլշևիկները առաջնորդվեցին Ռ-Կ/Կ երկրորդ ծրագրում ընդունված Վ. Լենինի դրույթով, ըստ որի՝ «...դպրոցը ոչ միայն պետք է լինի կոմունիզմի սկզբունքների հաղորդիչն ընդհանրապես, այլև պրոլետարիատի գաղափարական, կազմակերպական, դաստիարակչական ազդեցությունն աշխատավոր մասսաների կիսապրոլետարական և ոչ պրոլետարական խավերին հաղորդող՝ կոմունիզմը վերջնականապես հաստատելու ընդունակ սերունդ դաստիարակելու նպատակով»<sup>6</sup>: Փաստորեն կոմկուսը դպրոցը դիտում էր որպես գործիք իր գաղափարների կենսագործման մարտիկներ պատրաստելու համար: Դրանով իսկ մերժվում էր մատաղ սերնդին ազգային ոգով դաստիարակելու և միաժամանակ անհատի ազատ կրթություն ստանալու իրավունքը: Ավելին, 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նորաստեղծ խորհրդային իշխանությունը, չունենալով սեփական ծրագիր, Ռուսաստանում կրթական բարեփոխումներ կատարելու համար օգտագործում էր եվրոպական և ամերիկյան մանկավարժական մտքի մի շարք փորձարարական տեսություններ՝ դրանք համարելով հեղափոխական և նոր կարգերին համապատասխան:

1920թ. դեկտեմբերին Հայիեդկոմը, առանց հաշվի առնելու Հայաստանի ազգային առանձնահատկությունները, ինչպես նաև կրթության բնագավառում նախորդ վարչակարգի օրոք կատարված ժողովրդավարական բարեփոխումները, բացառելով հայ առաջատար գիտնական մանկավարժների մասնակցությունը նոր՝ խորհրդահայ կրթական համակարգի ստեղծման գործին և մեխանիկորեն ընդօրինակելով Խորհրդային Ռուսաստանին, ընդունում է մի շարք օրենսդրական ակտեր: Հայիեդկոմի և Լուսժողկոմատի հրովարտակներով ու հրամանագրերով դպրոցը անջատվում է եկեղեցուց, պետականացվում են կուլտուր-կրթական հիմնարկները, արգելվում է հոգևոր առարկաների դասավանդումը, մտցվում է աշխարհիկ կրթության սկզբունքը<sup>7</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ Խորհրդային Ռուսաստանի օրինակով նման հրովարտակների ընդունումը Հայաստանի պայմաններում էական դեր չէր կարող խաղալ: Ի տարբերություն նախորդ վարչակարգի, ուր պետական աջակցության հետ մեկտեղ սկզբնապես կիրառվեց դպրոցների կառավարման հասարակական սկզբունքը, խորհրդային նորաստեղծ իշխանությունը պետականացրեց դպրոցները: Բացի այդ, Լուսժողկոմի հրամանով վերացվեցին նախորդ իշխանությունից ժառանգություն մնացած դպրոցական պաշտոնները, հոգաբարձությունները և ծնողական խորհուրդները, որոնք 19-րդ դարի կեսերից կարևոր դեր էին խաղացել հայ դպրոցը նյութական միջոցներով ապահովելու գործում: Դրանց փոխարեն ստեղծվում էին դպրոցական մշտական խորհուրդներ՝ դպրոցական աշխատողներից, աշակերտներից և լուսավորության բաժանմունքի ներկայացուցչից: Դպրոցական խորհուրդը գործադիր մարմին էր և ենթակա էր շրջանային ժողկրթբաժնին:

Դպրոցական հոգաբարձությունների վերացումը՝ պետական միջոցների բացակայության պայմաններում, փաստորեն դպրոցը զրկեց անհրաժեշտ նյութական և ֆինանսական հենարանից: Ժողկրթության բնագավառի աշխատանքները ղեկավարելու նպատակով 1920թ. դեկտեմբերի 12-ին նախկին Հանրային կրթության և արվեստի նախարարության հիմքի վրա կազմավորվեց Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որի առաջնահերթ խնդիրն էր վերսկսել պատերազմական գործողությունների հետևանքով ընդհատված դպրոցական կյանքը:

6 «ՍՄԿԿ-ն...բանաձևերում և որոշումներում», Եր., 1986, հ 2, էջ 104-105:

7 «ՅԽՍԳ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջմիածին, 1921, էջ 7:

Սակայն 1921թ. հունվարին վերսկսված դպրոցական պարապմունքները կարճատև էին: Հայեղովորի կողմից գործադրված անհիմն բռնությունները զինվորականության և նախորդ վարչակարգի պաշտոնյաների նկատմամբ, «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործումը տնտեսական ծանր վիճակում գտնվող հանրապետությունում էլ ավելի խորացրեց ճգնաժամը՝ առաջ բերելով ժողովրդի արդարացի գայությունը: Ի թիվս այլ գործոնների, այս հապշտապ միջոցառումները դարձան Փետրվարյան ժողովրդական ապստամբության բռնկման պատճառը:

Փետրվարյան ապստամբությունը պաշտպանեց Հայաստանի բարձր դասարանների աշակերտության և ուսուցչության մեծ մասը: Ապստամբության պարտությունից հետո, վախենալով խորհրդային իշխանության վրեժխնդրությունից, իր բնակավայրերը լքեց նաև աշակերտության և ուսուցչության զգալի մասը: 1921թ. ապրիլի 26-ին Հայեղովորին ուղղված Լուսժողկոմի գեկուցագրում նշվում էր, որ Երևան քաղաքից հեռացել են աշակերտության և ուսուցչության 95%-ը, Նոր Բայազետից՝ 25%-ը: Գրեթե նույնանման իրավիճակ էր նաև Էջմիածնում: Քաղաքացիական պատերազմի հետևանքով դպրոցների մեծ մասը վերածվել էր զորանոցների, իսկ դպրոցական գույքը հափշտակվել էր, կամ էլ օգտագործվում էր որպես վառելիքայտ<sup>8</sup>: Անհրաժեշտ էր կտրուկ միջոցառումներ ձեռնարկել դպրոցական գործը կարգավորելու համար:

1921թ. հոկտեմբերին ՀԽՍՀ Ժողկոմխորհը ընդունեց հատուկ հրովարտակ, որով քաղաքացիական և զինվորական կազմակերպություններից պահանջում էր 15-օրյա ժամկետում ազատել զբաղեցրած դպրոցական շենքերը՝ դրանք հանձնելով Լուսժողկոմատի տնօրինությանը<sup>9</sup>: Բացի այդ, հանրապետությունում ստեղծված տնտեսական ծանր իրավիճակը հարկադրեց 1922թ. ապրիլին ընդունել որոշում կուլտուր-կրթական հիմնարկների ֆինանսավորումը կենտրոնական բյուջեից հանելու և տեղական բյուջեների մատակարարմանը հանձնելու մասին: Որոշման համաձայն՝ քաղաքային դպրոցներում ծնողներից պետք է գանձվեր ուսման վարձ, իսկ գյուղական բնակավայրերում գյուղացիությունը պարտավոր էր ինքնահարկմամբ պահել դպրոցները և այլ մշակութային օջախները:

Հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ դպրոցը դիտել էր իր գոյության երաշխիքներից մեկը, ըմբռնումով մոտեցավ այս որոշմանը: Չնայած տնտեսական ծանր կացությանը՝ ազգաբնակչությունը միջոցներ էր հատկացնում դպրոցական գործին: Դրա հետևանքով էր, որ եթե միութենական այլ հանրապետություններում Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ-ի) առաջին շրջանում կտրուկ կերպով նվազել էր դպրոցական ցանցը, ապա նրանցից ավելի ծանր տնտեսական վիճակում գտնվող Խորհրդային Հայաստանում աճ էր նկատվել:

Հատկանշական է, որ դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության օրոք միայն գյուղերից ստացվել էին շուրջ 300 խնդրագրեր՝ դպրոցների բացման պահանջով: ՆԷՊ-ի պայմաններում, երբ գյուղը բռնել էր տնտեսական վերելքի ճանապարհը, հայ գյուղացիությունն ինքը միջոցներ էր հատկացնում դպրոցների կառուցման համար: Արդեն 1925թ. հանրապետության 75 գյուղերում կառուցվում էին դպրոցներ, իսկ 31 գյուղերում նախատեսվում էր շինարարական աշխատանքները սկսել հաջորդ տարի: Բայց միայն դպրոցաշինարարության համար պահանջվում էր 24 մլն ռուբլի, իսկ կառավարությունը հատկացրել էր ընդամենը 250 հազար ռուբլի: Փաստորեն խորհրդային կառավարության օգնությունը լոկ բարոյական նշանակություն ուներ և պետք է խթաներ գյուղացիության նախաձեռնությունը: «Մեր մասսայական դպրոցը,- խոստովանում էր Լուսժողկոմ Ա.Սալվյանը Հայաստանի խորհուրդների 6-րդ համագումարում,- գյուղացիության սիրո 8 ՅԱ, ֆ 122, ց 1, գ. 31, բ. 40:

9 «ՅԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, էջմիածին, 1921, էջ 22:

առարկան է: Գյուղացիությունը, դուք գիտեք, հսկայական միջոցներ է տվել մեր դպրոցների շինարարության համար»<sup>10</sup>:

Սակայն իրավիճակը ծանր էր քաղաքներում, հատկապես Երևանում և Լենինականում, ուր երեխաների ընդգրկումը դպրոցներում մեծ էր, պարսպամուքները տեղի էին ունենում եռահերթ: Մինչդեռ Լուսժողկոմատը պետական բյուջեից նոր դպրոցների կառուցման համար ստանում էր չնչին գումարներ:

1921-1922 ուստարում Հայաստանի 545 դպրոցներում ուսանում էին 67403 աշակերտ-աշակերտուհիներ<sup>11</sup>: Բացի այդ, հանրապետությունում գործում էին 20 յոթամյա դպրոցներ<sup>12</sup>: Փաստորեն Հայաստանի առաջին Հանրապետության օրոք ստեղծված դպրոցական ցանցը վերականգնվել էր, սակայն հետագա տարիներին նրա քանակական աճը շատ դանդաղ էր:

Թուրքական բանակի երկրորդ 1920թ. արշավանքի և ռուսական կարմիր բանակի առաջխաղացման հետևանքով դպրոցների մեծ մասը վերածվել էր գորանոցների, գրեթե ամբողջությամբ հափշտակվել կամ ոչնչացվել էր առանց այդ էլ չնչին դպրոցական գույքը: Գյուրոցների նյութատեխնիկական բազան գտնվում էր անմխիթար վիճակում, չկային անհրաժեշտ գրեմական պիտույքներ: Չնայած Խորհրդային Ռուսաստանը օգնեց Հայաստանին՝ հատկացնելով որոշ քանակությամբ թուղթ և գրեմական պիտույքներ, սակայն դա անբավարար էր աճող պահանջմունքները հոգալու համար: 1920-ական թվականներին դպրոցների նյութատեխնիկական բազայի հարստացման հարցը իշխանության կողմից այդպես էլ չլուծվեց:

1920-ական թվականների կեսերին հանրապետությունում լուրջ քննարկման հարց դարձավ ընդհանուր պարտադիր կրթության անցնելու խնդիրը: Դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության օրոք քննարկվել էր այս հարցը, սակայն թողնվել էր ապագային: Կոմկուսը ձգտում էր արագորեն ավարտել Խորհրդային նոր դպրոցի կառուցումը: Քանի որ երեխաների ամենամեծ ընդգրկումը դպրոցներում տվել էր Երևանը՝ 107% և Մեղրիի գավառը՝ 124%, ապա որոշվում է Երևանում և Մեղրիում հայտարարել ընդհանուր պարտադիր կրթություն<sup>13</sup>: Սակայն Մեղրիի շրջգործկոմը, քննարկելով Լուսժողկոմատի առաջարկը, մերժում է այն, նկատի ունենալով նյութատեխնիկական բազայի բացակայությունը և մանկավարժական կադրերի պակասը: Պետք է նշել, որ Լուսժողկոմատի այս որոշումը ընդունվել էր հասշտապ, առանց հաշվի առնելու նյութական և ֆինանսական միջոցների առկայությունը, դպրոցաշինության զարգացման տեմպերը, մանկավարժական կադրերի քանակը:

Կոմկուսը հատկապես Լուսժողկոմատից պահանջում էր զգալի ուշադրություն հատկացնել նոր ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպմանը: 1920-ական թթ. Խորհրդահայ դպրոցը կարելի է համարել փորձարարական /էքսպերիմենտալ/: Կոմկուսը, նախաձեռնելով Խորհրդային նոր դպրոցի ստեղծումը, իր գաղափարաքաղաքական ազդեցությունը ապահովելու համար պահանջում էր մանկավարժներից նոր ուսումնական մեթոդների կիրառում: 1923թ. հաստատվեցին նոր ուսումնական ծրագրերը տարրական և յոթամյա դպրոցների համար: Ուսուցման հիմքում դրվեցին աշակերտների ուսուցման մի շարք փորձարարական մեթոդներ՝ «կոմպլեքսային մեթոդը», «Դ-ալտոն-պլանը», «բրիգադա-լաբորատոր» մեթոդը և այլն: Այս նորարարությունները, որոնք նաև աղավաղվում ու հարմարեցվում էին նոր վարչակարգի պահանջներին, ոչ միայն չէին նպաստում ուսումնական գործընթացի բարելավմանը, այլև հաճախ տեղերում գործնականում չէին էլ

10 ՀԱԱ, ֆ. 65, ց. 6, գ. 868, թ. 106:

11 Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 74, թ. 10:

12 Նույն տեղում, գ. 75, թ. 32:

13 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 79, թ. 14:

դրվում կիրառության մեջ: Մեթոդական այդ նորարարությունների դեմ հատկապես հանդես էին գալիս հին մանկավարժական կադրերը, որոնք գտնում էին, որ դրանք չեն նպաստում աշակերտության ունակությունների ու գիտելիքների բացահայտմանը և հարստացմանը, այլ ստեղծում են կատարյալ խառնաշփոթ ուսումնադաս-տիարակչական աշխատանքների կազմակերպման գործում:

Խորհրդահայ դպրոցի ստեղծման ճանապարհին լուրջ պրոբլեմ էր նոր դասագրքեր կազմելու առաջադրանքը: Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին հանրապետության դպրոցներում կիրառության մեջ էին նախկին դասագրքերը: Միայն 1923թ. Պետհրատը հրատարակեց նոր դպրոցական դասագրքեր և ուսումնական ծրագրեր: Տպագրվեց 10 ամուն դասագիրք՝ 102,500 տպաքանակով, 3 ամուն դպրոցական ձեռնարկներ և ծրագրեր: Հրատարակվեցին «Կարմիր արև» ընթերցարանը, «Դասընկեր» Ա տարի, Ռոմանոս Մելիքյանի «Դպրոցական երգերը» և այլ դասագրքեր<sup>14</sup>: Հետագա տարիներին դրանց քանակը բավականին աճեց, սակայն 1920-ական թթ. վերջերին դեռևս ոչ բոլոր դպրոցներն ունեին անհրաժեշտ քանակությամբ դասագրքեր:

1920-ական թթ. սկզբներին խորհրդային իշխանության առջև կանգնած ամենաբարդ հիմնահարցերից էր ժողկրթության բնագավառի հիմնարկները մանկավարժական կադրերով ապահովելը, որովհետև սովի և համաճարակային հիվանդությունների տարածման շրջանում հատկապես ծանր դրության մեջ էին զրտնվում հայ մանկավարժները: Հանրապետության լուսժողկոմի զեկուցագրում նշվում էր, որ « Լուսավորական գործը կանգնած է այնուամենայնիվ մռայլ հեռանկարների առաջ: Քաղցած ստամոքսը չի կարող մտավոր աշխատանքի տրամադրել, կարելի է համարձակ ասել, որ լուսավորական գործի աշխատավորների նյութական վիճակը թե՛ գավառներում և թե՛ մանավանդ մայրաքաղաքում կատաստրոֆիկ է: Դրանց մեծ մասը քարշ է տալիս իր գոյությունը, վերջին բաժկոնն ու վարտիքը շուկա հանելով: Երևանի ժողովրդական համալսարանի դոցենտներից ոմանք կանգնած են սովամահ լինելու վտանգի առջև, նույն վիճակն է սպասվում հարյուրավոր ուրիշ մտավոր աշխատավորների, որոնք ոչ ծախս ապրանք ունեն և ոչ էլ ազատ շուկայի ձևերով բանվորական ուժ վաճառելու հնարավորություն»<sup>15</sup>: Ուսուցչության դրությունը բարելավելու կառավարության ջանքերը փաստորեն անցնում էին ապարդյուն:

1920-ական թվականներին ևս դասավանդման հիմնական բեռը իրենց վրա էին կրում հին մանկավարժական կադրերը: 1924թ. ուսուցչության միայն 10,5%-ն ուներ բարձրագույն կրթություն, 51,6%-ը՝ միջնակարգ, իսկ 37,9%-ը՝ միջնակարգից ցածր: Բացի այդ, տեղին է նշել, որ ուսուցչության միայն 5%-ն ուներ անհրաժեշտ մանկավարժական կրթություն, 35%-ը՝ թերի մանկավարժական կրթություն, 70%-ն էլ ընդհանրապես մանկավարժական կրթություն չունեին<sup>16</sup>:

Հայ մանկավարժությունը, հատկապես հին մանկավարժական կադրերը, որոնք մի քանի սերունդ շարունակ կրթել էին աշակերտությանը ազգային ոգով, դժվարությամբ էին համակերպվում նոր գաղափարախոսությանը: Պատահական չէ, որ քիչ անց՝ 1928 թվականին, Լուսժողկոմ Ա.Մռավյանը խոստովանում էր. «Հաճախ Բաֆֆին, Ահարոնյանը և լավագույն դեպքում Ժյուլ Վեռնն են իշխում պատանեկության վրա, փոխանակ մեր դարաշրջանի պրոբլեմները լուսաբանող զեղարվեստական գրականությունը: Սա խոշոր բաց է, մեր մանուկ սերնդին հեղափոխական պրոլետարիատի էնտուզիազմով, միջազգայնականությամբ ներշնչելու աշխատանքը դեռ շատ քիչ է կատարված»<sup>17</sup>: Ստացվում է, որ 1920-ական թվա-

14 «Խորհրդային Հայաստան», 11 սեպտ. 1929թ.:

15 «Խորհրդային Հայաստան», 10 մարտի, 1923:

16 Ա. Մռավյան, Գողվածներ և ճառեր, Ե., 1961, էջ 298:

17 Մ. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 460:

կանների խորհրդային պաշտոնյաների համար անգամ արկածային վեպերի հեղինակ օտարազգի գրողն ավելի նախընտրելի էր, քան ազգային գրականության հսկաները:

### **Այսպիսով՝**

**Առաջին,** Հայաստանի Հանրապետության օրոք, շնորհիվ պետական միջոցառումների և հասարակության ջանքերի, դրվել էին նոր՝ ազգային-պետական կրթափորձակարգի հիմքերը, որի զարգացումն ընթանում էր բավականին դինամիկ կերպով: Միայն 1920-1921 ուստարում նախատեսվում էր բացել 1500 տարրական դպրոց, հիմնական բարեփոխման ենթարկել միջնակարգ կրթությունը: Իսկ ահա Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, միայն՝ 1930-ական թթ. սկզբներին, հնարավոր եղավ դպրոցների քանակը հասցնել 1000-ի:

**Երկրորդ,** Հայաստանի Հանրապետությունում կային եվրոպական կրթական համակարգին քաջաձանոթ մանկավարժներ, որոնք կարող էին հայ դպրոցը համապատասխանեցնել տվյալ ժամանակաշրջանի պահանջներին: Դժբախտաբար նրանց մի մասը, այդ թվում՝ Ն. Աղբալյանը, Լ. Շանթը և ուրիշներ, հարկադրված էին տարագրվել և իրենց մանկավարժական գործունեությունը շարունակել արտերկրի հայ գաղթօջախներում՝ ստեղծելով ազգային-կրթական նոր հաստատություններ: Սփյուռքում նրանք տասնամյակներ շարունակ կրթում և դաստիարակում էին հայ աշակերտությանը ազգային ոգով, հույս ունենալով, որ սպազայում Մայր Հայրենիքում ևս պայմաններ կստեղծվեն ազգային-կրթական համակարգի վերածննդի համար:

**Երրորդ,** որքան էլ նոր՝ խորհրդային իշխանությունը 1920-ականներին ձգտեց կոտրել ազգային ավանդույթներին հավատարիմ մնացած հայ մանկավարժությանը, դարձնել նրան նոր կարգերի հլու կամակատարն ու գաղափարախոսական գործիքը կոմունիստական կուսակցության ձեռքում, դա նրան չհաջողվեց: Կոմունիստական ամենատիրության հաստատման պայմաններում անգամ հայ մանկավարժները զգալի աշխատանք կատարեցին աշակերտությանը ազգային ոգով դաստիարակելու և հայկական դպրոցի լավագույն ավանդույթները մանկավարժների նոր սերունդներին փոխանցելու ուղղությամբ:

Ուստի, արտահայտելով 1920-1930-ականների քաղաքական ցնցումների ու հալածանքների պայմաններում հայ դպրոցի լավագույն ավանդույթներին հավատարիմ մնացած մանկավարժների միահամուռ կամքը, Ն. Աղբալյանը գրում էր. «Նոր սերունդին պիտի ներարկել զօրաւոր ազգային գիտակցութիւն քաղաքական իմաստով: Նրան պէտք է ներշնչել, որ ինքը հայ է, ուրեմն տարբեր ազգի զաւակ, քան այն մարդիկ, որոնց երկրի մէջ ապրում է այսօր. որ նա ունի մի բնիկ հայրենիք, որ պէտք է ազատագրուի: Նրան պէտք է ներշնչել, որ իր ազգը ընդունակ է հանրօգուտ ազգային մշակոյթ ստեղծելու, որի ապացոյցը տված է դարերի ընթացքին և որ այդ մշակոյթը կարող է զարգանալ և արմատանալ միմիայն ազատ պայմանների մէջ և սեփական հայրենիքում»<sup>18</sup>:

18 «Վեն». երկանսեայ հանդես մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, Զ. Տարի, թիւ 2, 1938, էջ 5:

**Summary****THE SCHOOL IN THE FIRST AND SECOND  
REPUBLIC'S OF ARMENIA****A comparative analysis of the situation in 1918-1925***Gurgen V.Vardanyan*

At the end of May 1918 the Declaration of the Republic of Armenia (RA) opened a new page in the history of the Armenian school. During two years of existence of RA the democratic changes in the sphere of education were aimed at the creation of the new national-state educational system. After the establishment of the Soviet power in Armenia C(B)PA did not continue educational reforms. Moreover, it followed a new policy of consistent adoption and realization of the legal acts and resolutions. Mostly they were directed towards the denationalized school system's creation which would correspond to the new regime. In the 1920s the Soviet administrative system exerted efforts to impart the Communist ideology to Armenian pedagogy in order to turn it into a humble instrument. But the most part of Armenian teachers continued to educate pupils in the national spirit.